ՍԻՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ

2017 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում տեղի ունեցած կլորսեղանի քննարկումը նվիրված էր սիրիական զարգացումներին: Զեկուցումներով հանդես եկան Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի գիտաշխատողներ պ.գ.թ. Արաքս Փաշայանը, պ.գ.թ. Գոռ Գևորգյանը և Արարատ Կոստանյանը: Քննարկումը վարում էր ԱԻ տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ով հանդես եկավ ողջույնի խոսքով և քննարկվող թեմայի վերաբերյալ ներկայացրեց մի շարք դիտարկումներ:

Արաքս Փաշայանի զեկուցումը նվիրված էր սիրիայի ճգնաժամի հանգուցալուծմանը, այդ ուղղությամբ Թուրքիայի, Իրանի, Ռուսաստանի քաղաքականության վերլուծությանը: Ա. Փաշայանը նշեց, որ ԴԱԵՇ-ի (Իրաքի և Լևանտի իսլամական պետություն) պարտությամբ Սիրիայում իրավիճակը կարծես թե մոտենում է իր հանգուցալուծմանը: Նոյեմբերի 11-ին սիրիա-իրաքյան սահմանին գտնվող Բուքամել բնակավայրի ազատագրումը ԴԱԵՇ-ից հանգուցային նշանակություն ուներ, քանի որ Սիրիայում ռազմական գործողություններին մասնակցող երկու դաշինքների միջև մրցակցություն էր ընթանում, թե ով առաջինն արդյունքի կհասնի: Այժմ Սիրիայի տարածքի մոտ 90 %-ը կառավարական ուժերի վերահսկողության տակ է:

Փաշայանի կարծիքով Սոչիում նոյեմբերի կեսերին Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի նախագահների մասնակցությամբ կայացած գագաթնաժողովն արձանագրեց, որ այդ երեք երկրները կարողացան գտնել Սիրիայի հակամարտության քաղաքական լուծման բանալին: Ռուսաստանը կարողացավ պահպանել ներկայությունը տարածաշրջանում, Թուրքիան ևս հաջողությունների հասավ՝ ամրապնդվելով Սիրիայի տարածքում և հակազդելով քրդական ինքնավարության ստեղծմանը, ինչպես նաև նավթը դուրս բերելով սև շուկա: Տարածաշրջանում իր դիրքերն ուժեղացրեց նաև Իրանը: Ա. Փաշայանը նշեց, որ

մի քանի տարի առաջ հնարավոր չէր անգամ պատկերացնել Ռուսաստան-Իրան-Թուրքիա համագործակցության ձևաչափի գոյությունը, որն այժմ լուրջ հաջողություններ է արձանագրում:

Սիրիական հակամարտության համատեքստում Փաշայանը խոսեց նաև իրանա-սաուդական մրցակցության մասին: Ամփոփելով նա նշեց, որ այս պատերազմում կարելի է արձանագրել Սիրիայի կառավարության հաղթանակը, սակայն պարտվեց սիրիացի ժողովուրդը: Սիրիան անցավ այն երկրների վերահսկողության տակ, որոնք կարողացան լուծում գտնել:

Գոռ Գևորգյանի ելույթը նվիրված էր տարածաշրջանում ուժերի նոր հարաբերությունների ձևավորմանը և դրանում Եգիպտոսի դերին: Եգիպտոսը, չնայած վերջին տարիների ճգնաժամին, շարունակում է պահպանել իր առաջատար դիրքն արաբական աշխարհում: Նա ընդգծեց Թեհրան-Կահիրե շփումների կարևորությունը սիրիական ճգնաժամի հաղթահարման գործում: Սիրիական հակամարտությունում Եգիպտոսի դիրքորոշումը, ըստ Գոռ Գևորգյանի, որոշակիորեն համընկնում է Իրանի և Ռուսաստանի դիրքորոշումների հետ:

Գոռ Գևորգյանը նշեց, որ Մերձավոր Արևելքում նոր դիմանկար է ձևավորվում՝ հին խաղացողներով ու նոր մարտահրավերներով: Նա առանձնացրեց մի շարք կետեր՝ մասնավորապես Եգիպտոսի վերածնունդը, նորացված Թուրքիան, որը կարողացավ օգտվել իրավիճակից և առաջ տանել նեոօսմանական օրակարգը, իսկ Իրանն ընդլայնեց տարածաշրջանում ծավալապաշտական քաղաքականությունը:

Արարատ Կոստանյանը խոսեց ալ-Նուսրա ճակատի մասին, որը շարունակում է պահպանել վերահսկողությունն Իդլիբի շրջանում: Կոստանյանն ընդգծեց Դեյր էզ-Զորի ազատագրումը, քանի որ սիրիական նավթի պաշարների 40%-ն այնտեղ է գտնվում: Նրա կարծիքով ԴԱԵՇ-ի պարտությամբ Սիրիայում պատերազմը չի ավարտվում, քանի որ դեռևս ուժեղ դիրքեր ունեն Նուսրա ճակատը և քրդական ուժերը, որոնք վերահսկում են երկրի հյուսիսային շրջանների մեծ մասը: